



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Գ. Ա. Ա. Ա. Ա.

ՆԱՊԱՍՏԱԿ ԽԵԶԱՆԻ

ՎՐԵԺԻՆԴՐՈՒԹԻՒՆԸ

Կ. Ա. Մ.

ԻՆՔԴ ՔԵԶ ՕԳԱԿԻ

ՀՐՈՅՑ

ՊԱՏՎԵՐԱՋ ԱՐԴ

Փրանսերէնից փուամդոնց

ԼԵԿՈՆ ՄԵԼԻՔ-ԱՌ ԱՄԵԱՆՑ



Թիվ 142. 1905  
ԱՐՄԵՆԻԱԿԱ 89. ՄԵ. ՄԵ. ԾՎԵՐԱՆԻՑ  
Պաշտպանական փոզ,

845  
Մ-31

1-3  
W

ամեւսին տիկին Նունիք Քաղաքարքի լիօնատակին նույն  
ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅԱՆԹԱՐԻՑ 30 MAY 2011

Մ

Փ. ՄԱՍՍՈՆ

845 ՆԱՊԱՍՏԱԿ ԽԵԶԱՆԻ

Մ-31

# ՎՐԵԺԻՆՆԴՐՈՒԹԻՒՆԸ

Կ. Ա. Մ

## ԻՆՔԴ ՔԵԶ ՕԳՆԻՐ

ԶՐՈՅՑ

ՊԱՏՎԵՐԱԶԱՐՔ

ՄԱՅԻՍԻ ԳՐԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Փրանսերէնից փոխադրեց

ԼԵԽՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑ



ԹԻՖԼԻՏ, 1905

ԱՐԱՐԱԿԱՆ ՏՊ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պատշաճ գույն, № 12.

25 . 06 . 2013

1868


205 Гм.



## ԱՐՄԱՆԱԿ ԽԵՂԱՆԻ ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ

Կ Ա Մ

### ԻՆՔԴ ՔԵԶ ՕԳՆԻՐ



Հին, շատ հին ժամանակուանից մի  
անտառ կար, այնպէս մեծ ու ընդար-  
ձակ, այնպէս թանձ ու խիտ, որ մարդիկ  
շատ քիչ անգամ էին մտնում նրա խորերը.  
որովհետև նրանում ոչ-միայն յարմար ճա-  
նապարհներ չկային անցուղարձի համար,  
այլև մէջը լիքն էր տեսակ-տեսակ վայրի  
զաղաններով:

Дозв. ценз. С.-Петербургъ, 4 октября 1904 года.



208-99 (4-96)

Ահա հէնց այդ անտառի մէջ, կանանչ



Ամուսինները գո՞ն էին իրանց վիճակից:

Թփերով պատած մի բլրակի լանջի վրայ,  
նապաստակ Խէշանն ու իր կին Խորիշանը՝

աշունքուայ զլզլան—պարզըկայ սիրոն զի-  
շերներին փորել էին իրանց բոյնը—փոք-  
րիկ տնակը:

Մի նեղլիկ շաւիդ մեծ շագանակինու  
տակից, մի ուրիշը փոքրիկ ապառաժի ստո-  
րոտից, երրորդն էլ կաղնիների թաւուտից  
սկսուելով՝ միասին տանում-հասցնում։ Էին  
մի բոլորակ փոքրիկ սենեակի, որի մէջ տե-  
ղաւորուել էին նապաստակ Խէշանն ու իր  
կին Խորիշանը։

Խէշանն ու Խորիշանը շատ սիրով էին  
իրար հետ և կաթն ու կորեկի պէս էլ հաշտ  
ու միաբան։

Գարնան սկզբին Խորիշանն աշխարհ է  
բերում երեք հատ սիրուն, փափլիկ, խլը-  
տուրիկ ականջներով, կնգուշտուրիկ տոտիկ-  
ներով փոքրիկ-փոքրիկ, շլոքպուրիկ—խայ-  
տարդէտ նապաստակներ։

Որպէսզի նորածինները չմրսեն, ծննդկա-  
նը պոկոտում է իր փորի վրայից փափուկ,  
ձնի պէս սպիտակ մազերը, փուռմ յատա-  
կին, թաթլիկներով էլ տփտըփում, տար տե-  
ղաշոր պատրաստում և մէջը պառկացնում  
նրանց։

Ամուսինները գո՞ն էին իրանց վիճակից

և երջանիկ։ Նրանք միայն մտածում էին այն քաղցր բռպէի մասին, երբ լուսնկայ սիրուն զիշերներին պէտք է տեսնէին իրանց սիրելի զաւակների խաղալը, թռչկոտալը, ցաքուտներում ծլունգ-ծլունգ լինելը, կանանչկուտներում առաջ-կտրուկի տալը, խմնդրուզիներ ու տոճիկներ անելով չափ ընկնելը, իրար ետեից վազվելը, նրանց զուարձանալը……

Բայց ափսոս, որ այդ սիրով ու միաբան ամուսինների երջանկութիւնը երկար չի տևում։


Մէկ օր մի նենգամիտ աղուէս՝—որին հեռացրել էին հայրենի երկրից իր անպիտան, իր անհաշտ ու անտանելի քնարութեան համար,—զալիս է որ նոր քնակութիւն հաստատի անտառի հէնց այն մասում, ուր այնպէս զնի ու երջանիկ, այնպէս հանգիստ ու անվրդով և հազար ու մի լաւ-լաւ յոյսերով ապրում էր մեր բարեկամ Խէշանն իր ընտանիքով։

Ել ինչ առել կ'ուզի որ խորամանկ աղուէսի համար մի զժուար բան չէր նապատակների տեղն անելը—զտնելը։

Սև-զրողի տանելուն հէնց-որ չի տես-

նում փոքրիկ ապառաժի ստորոտից ձգուող նեղլիկ շաւիղը, իսկոյն կկրզում է—յետին ուսների վրայ նստում, աշքերը չուում—լայն բաց անում, ականջները խլըշքնում և ուրախ-ուրախ բացականչում։

«Մէկ տեսէք, մէկ տեսէք, թէ բաղդս ինչպէս բանեց։ Եթէ այս նեղլիկ շաւիղը մի քիչ լայնացնեմ, կարող եմ հեշտութեամբ



Մէկ տեսէք, մէկ տեսէք, թէ բաղդս ինչպէս բանեց։

ներս մտնել, որտեղ շատ լաւ կը-լինի ինձ համար։ Բացի զրանից կարելի է թէ՛ էլի բաղդիցս բնի խորքումն էլ միքանի փափ-

լիկ ու չաղլիկ նապաստակներ գտնեմ, որոնց փառաւոր կերպով կը-մաքրազարդեմ—բոլորին էլ կ'ուտեմ: Իւֆ... ինչ լաւ եղաւ, Է...»:

Այդ ասելիս անպիտանի բերանի ջուրը գնում է ու ինքն էլ սկսում է որկրամոլի նման լեզուովը լսութել իր սրուլիկ—սրածայր դունչը:

Եւ հինց միևնոյն երեկոյեան էլ ոչուփուչն սկսում է իր սուր-սուր ճանկերով փորել գետինը, որ դէպի բնի ներսը տանող անցքը լայնանայ:

Խէշանն ու Խորիշանը շուտով զլխի են ընկնում—հասկանում են, թէ ինչ մեծ վըտանգ է սպառնում իրանց գոյութեան:


«Ո՛, Տէր Աստուած, Տէր Աստուած, այս ինչ գժբաղզութիւն եկաւ մեր զլխին»,—դառնացած սրտով բացականչում է Խէշանը, ապա դիմում կնոջն ու ասում.

—Խորիշան-ջան, մեր խեղճ երեխէքը կորան:

Ասում է և աղի-աղի լաց լինում—դառնագին արտասպում:

—Ա խելքի տոպրակ,—նկատում է ամուսնուն Խորիշանը, որ խելքը զլխին մի աշքաբաց կին էր.—արտասուքներովդ ես

ուզում մեր երեխաներին ազատել թշնամու ձեռքից: 2ես ամաչում. չէ-որ տղամարդ



Միևնոյն երեկոյեան էլ ոչուփուչն սկսում է փորել գետինը... ես: Դու փոխանակ սրտապնդուելու և վր-

տանգի առաջ աւելի քաջանալու որ մի բան չինես, ընկհակառակն ես անում—դու նստել՝ լաց ես լինում: Ամօթ չՔ: 2Ք-որ այդպիսով դու մեր թշնամու հացին ես եղ քսում—նրան ուրախացնում: 2Ք-որ այդպիսով նա աւելի յանդուզն ու համարձակ, աւելի պնդերես ու պրտկերես—անամօթ կը-զառնայ ու երես առնելով՝ աստառ էլ կ'ուզի և ինչ չարիք ասես՝ մեր գլխին կը-բերի:

—Լաւ, ես մենակ ի՞նչ կարող եմ անել այդպիսի զօրեղ և անյաղթելի համարուած թշնամու դէմ:

—Ես էլ հէնց զրա համար եմ ասում, որ արտասուելով բան չի դառնալ, այդ ոչ մի օգուտ չի բերիլ մեզ բացի վնասից. այլ անհրաժեշտ է զօրծ շինել, գործ... հասկանում ես:

—Տէ՛ր Աստուած... Ախր ես ի՞նչ կարող եմ անել մենակ տեղովս որ ասում ես:

—Այն՝ որ հէնց այս րոպէիս կարող ես վաղէվազ գնալ մեր հարևան ճագարանոցը և նրանցից օգնութիւն խնդրել: Հարևանութիւնն ու բարեկամութիւնը էլ ո՞ր օրուայ համար է, որ այսպիսի նեղ օրին, այսպիսի հարկաւոր բոպէին իրար թե ու թիկունք

շլինենք—իրար կարիքի, իրար հաւարի չհասնենք—միմեանց չօգնենք...: Ճուտ, Խէ-շան-ջան. շուտ վազիր-գնա: Ես հաւատացած եմ որ մեր հարևանները մեզ չեն մերժիլ իրանց օգնութիւնը: Ո՞վ իմանայ, աշխարհս վատ, ժամանակը շար, իսկ միջի մարդիկը դիշատիչ գազաններից էլ վատթար. հետևապէս՝ վազը-միւս օրը այս ուղարք կարող է նրանց զռանն էլ չոքել, իրանք էլ մեզ ու միւս հարևաններին կը-դիմեն, և ի հարկէ մենք էլ չենք մերժիլ մեր օգնութիւնն ու աջակցութիւնը: Լաւ չեմ ասում:

—Այն, ի-հարկէ: Բայց արդեօք նրանք այնքան հեռատեսութիւն կ'ունենան, որ հականան այդքանը:

—Այստեղ գժուար հասկանալու ոչինչ չկայ. ասածս պարզ է ցերեկուայ լոյսի պէս: Եւ եթէ այն-գլխից—հէնց սկզբից, այսինքն շատ առաջուց այդպէս լինէինք միմեանց համար,—խօսքը շարունակում է խորիշանը, —այն, նախկին վտանգների ժամանակ եթէ միմեանց թե ու թիկունք եղած, իրար օգնած ու աջակցած լինէինք, շատ և շատ աղէտներից ազատ մնացած կը-լինէինք, այժմ աւելի լաւ ու ապահով կացութեան

մէջ կը-գտնուէինք և հիմա էլ ոչ-ոքի մըտքովն էլ չեր անցնիլ այսպիսի դժբաղութիւն բերել մեր զլիսին։ Ինչևիցէ. անցածնացածի մասին ցաւել այլս չարժէ, խրնդիրը և կարսորը ներկան է, որի մասին պէտք է մտածել և մի բան անել անպատճառ. ուստի որքան շուտ, այնքան էլ լաւ։ Անհրաժեշտ է օր-առաջ հեռացնել մեզանից այս դժբաղութիւնը, որպէսզի ապագայ ուրիշ չարիքներից ազատ մնանք և մեր առաջուայ նախանձելի, հանգիստ ու խաղաղ կեանքը շարունակենք։ Դէհ, քեզ տեսնեմ, մարդ-ջան, շտապիր, բոպէն թանգ է։



Փոքրութիւն եւ սեւծութես ՀԱՐԵՒՆՆԵՐ



Սապաստակ Խէչանը խրախուսուած իր սիրեցեալ կենակցի՝ իր խելօք կնոջ խօսքերից, խկոյն վեր է կենում, թաթլիկներովը սրբում արցունքները, Աստուած կանչում ու բնից գուրս գալիս դէպի մեծ շագանակենին տանող շաւզով, բայց այնպէս զգուշութեամբ որ խորամանկ աղուէն անգամ զլիսի չի ընկնում — չի իմանում այդ բանը։

Խէչանը վազէվազ զնում է իր մանկութեան ընկերներից մէկի մօտ, որ իրանց տանից հարիւր քայլաշափ հեռու էր բնակվում։

— Սիրելի Պոլշիկ, — ներս մտնելուն պէս

դիմում է նրան Խէշանը,—եկել եմ՝ մի ծառայութիւն խնդրեմ քեզանից։ Աստծու թակած չարամիտ աղուէսներից մէկը եկել-պաշարել է մեզ. նա կամենում է օրը-ցերեկով ձեռքներից խլել—զոռով յափշտակել մեր այնքան տարուայ պապական տունը։ Այդ տմարդի մտադրութիւնն իրագործելուց յետոյ՝ հասկանալի է թէ ուրիշ շատ շարիքներ էլ կը-բերի մեր զլխին։ Ուստի, ընկեր-ջան, յատուկ խնդրում եմ մի առժամանակ պատսպարես ձեզ մօտ կնոջս ու մեր փոքրիկներին։

—Վա, վա... էլ ինչ ասել կ'ուզի, էլ ինչ ասել կ'ուզի,—հեգնում է նա Խէշանին։ —Զ՞-որ եթէ դուք զաք մեզ մօտ, այդ անպիտան աղուէսը, անկասկած, այստեղ էլ կը-զայ և մեր երկու գերդաստանը նրա ճանկն ընկնելով՝ մի փառաւոր խնճոյք կը-դառնանք նրա համար։ Ո՛չ, սիրելի Խէշան, յոյսդ կտրիր մեզանից։ Աւելի լաւ է՝ դիմես Խլշիկանց։ Նրանք բնակվում են շատ յարմար տեղ, այն է՝ վերին վազնուտում, քանդուած հնձանից միքիշ զէնը։ Նրանց բոյնը թէ շատ խորն է և թէ բաւականաչափ ընդարձակ, այնպէս-որ դուք կարող էք միա-

սին տեղաւորուել այստեղ և շատ աւելի ապահով լինել, քան-թէ այստեղ մեղ մօտ։

Էլ ինչ ասել կ'ուզի որ Խէշանը շատ դժգոհ է մնում իր մանկութեան ընկեր-հարիանից, որի խելքի վրայ մեծ կարծիքի էր և բարեսրտութեան վրայ էլ անշափ վստահ։

Այդ հիասթափութիւնը այսպէս է շփոթեցնում Խէշանին, որ նա նոյնիսկ առանց մնաս-բարով ասելու է հեռանում ընկերի մօտից և շտապում վերին վազնուտում ապրող միւս հարեանի մօտ։

Բայց այդ հարեանը առաջինից աւելի քարասիրտ է զտնվում։ Նա մինչև անգամ չի էլ թողնում որ Խէշանը վերջացնի խօսքը, այլ անմիջապէս լնդհատում է նրան։

—Անկարելի է, պարոն, անկարելի։ Այստեղ այնպէս նեղուածք է, որ ես, կինս ու մեր հինգ երեխան հազիւ ենք կարողանում մի կերպ տեղաւորուել, հապա ի՞նչ կը-լինի մեր զրութիւնը, եթէ դուք էլ զաքաւելանաք։

—Բայց, սիրելի Խլշիկ...

—Առանց բայց-մայցի, —նորից ընդհատում է Խէշանին Խլշիկը.—ուղիղն եմ ա-

սում՝ անկարելի է: Իրաւն անեմ շատ եմ ցաւում որ քեզ մերժում եմ, սակայն դու էլ պէտք է լաւ գիտենաս, սիրելի Խէշան...

Բայց Խէշանը չկամենալով լսել նրա անմիտ բացատրութիւնը, իսկոյն երեսը շրջում է ու դուրս գալիս նրա մօտից էլ և շտապով վերադառնում տուն՝ մոլորուած, սիրտն արիւնով լցուած:

Իսկ անպիտան աղուէսը շարունակ փորում էր և քիչ-քիչ մօտենում փոքրիկ նապատակներին:

— Որ ասեմ, կը-հաւատամ, Խորիշան,— ներս մտնելուն պէս ասում է Խէշանը.— ամենքն էլ մերժեցին մեզ իրանց օգնութիւնը:


— Ի՞նչ ես ասում, զարմացած բացականչում է Խորիշանը:

— Ուղիղն եմ ասում...: Ո՛չ-ոք չկամեցաւ մեզ օգնել այսպիսի նեղ ըոպէին...: Ա-հ, փոքրոգի, անհեռատես հարևաններ...: Բայց միթէ այդ մարդիկ այնքան էլ չեն հառկանում, որ եթէ մի օր մեր ընդհանուր թըշնամին...

— Դէ, լաւ. լաւ,— մարդու խօսքը կը բոլուս է Խորիշանը.— այլս իզուր ժամանակ չկորցնենք նրանց նախատելով, այդ ևս ո՛չ

մի օգուտ չի բերիլ մեզ. այլ անհրաժեշտ է մի ելք, մի հնար գտնել այս նեղ դրութիւնից դուրս գալու, գլուխներս ազատելու:

— Եթք մարդ աղուէսի պէս զօրեղ ու ցածահոգի թշնամի ունի իր գիմաց և հետն էլ այնպիսի փոքրոգի ու անհեռատես հարևաններ, այլս ի՞նչ ելք, կամ ի՞նչ հնար



2/08-99

Հ. Պ. Մ.

Խէշանն ու Խորիշանը:

Կարելի է գտնել...: Խորիշան-ջան, ես բոլորովին յուսահատուած եմ:

— Ո՛չ, ո՛չ, հոգիս, մի ասիր այդպէս, եթէ ինձ սիրում ես: Փոքրոգի վախկոտ մարդիկն



Են այդպէս շուտով յուսահատվում—ամեն բանից ձեռք վերցնում...: Դու առաջ քաջ էիր, Խէշան-ջան, որի համար էլ մեր հարևան կանայք ինձ երնէկ էին տալիս և ես իրաւամբ պարծենում էի քեզպէս քաջ ամուսին ունենալով. հիմա ինչո՞ւ ես քեզ այդպէս կորցրել, շախտ վէր թողել, տղըթնել—կուշեկել, մանաւանդ-որ, փառք Աստուծոյ, դեռ ամեն յոյս կորած չէ:

—Էլ ուրիշ յուսատեղ մնաց:

—Ի-հարկէ:

—Ո՞րն է:

—Այն՝ որ շուտ կ'անես-կ'երթաս մեր թագաւոր-առիւծի մօտ և կը-յայտնես նրան, թէ ինչ աղէտալի դրութեան մէջ ենք զտնվում: Նա՝ իբրև թագաւոր իր դիրքին վայել աւելի պարզ միտք, աւելի բարի ու լայն սիրտ կ'ունենայ: Անշուշտ նա մի բան կ'անի մեզ համար և չի թողնիլ այսպէս մատնուած մի անպիտանի քմահաճոյքին. Նա անպատճառ կը-պաշտպանի մեզ այս անիրաւից, երբ ամեն բանի տեղեկանայ:

—Ես ինչ զիտեմ՝ որտեղ է բնակվում թագաւորը:

—Վուիշ... ի-հարկէ անտառում:

—Ես էլ զիտեմ որ անտառում, բայց ո՞ր մասում:

—Գնալիս ումից ասես՝ կ'իմանաս: Ո՞վ լինի, որ թագաւորի նման նշանաւոր մարդու տեղը չիմանայ:

—Ճատ բարի. բայց եթէ ես զնամ, չէ-որ իմ բացակայութեան ժամանակ անիծածը կարող է իր չար նպատակին հասնել:

—Դրա համար ամեննեին մի վախենար, միամիտ եղիր:

—Ի՞նչպէս:

—Ես մեր բոյնը աւելի կը-խորացնեմ. Նա այնքան էլ շուտ չի հասնիլ մեզ:

—Եթէ այդպէս է, ուրեմն հէնց այս երեկոյ ճանապարհ կ'ընկնեմ, ասում է Խէշանը:

—Եւ լաւ կ'անես,—վրայ է բերում Խորիշանը.—Քանի շուտ՝ այնքան աւելի լաւ:





Գ

ՄԵՇԻ ՃԱ.Մ.ԹՈՐԴԱՌՈՒԹԻՒՆ Ս.ՆՏԱ.ՌՈՒ ՄԻԶՈՎ.

**Լ**աւ պէտք է զիտենաք որ գնալ թագաւորի հետ խօսելու մտադրութիւնը շատ էլ հեշտ գլուխ գալու բան չէր: ճանապարհի ուղիղ կէսը անեղը ու անծայր անտառ էր, որի միջով մեր բարեկամ Խէչանն այնպէս պէտք է անցնէր, որ գայլի կամ մի այլ աղուէսի ճանկը չընկնէր. պէտք է շարունակ մեծ զգուշութեամբ ու կուզըկուզ — թաքուն — զադտնագողի առաջ գնար, որ կարողանար անվտանգ մնալ յանդուզն ժանտակուզերից, խիզախ կզաքիսներից, ծածկամիտ լուսաններից ու ծակաչք կընդումներից, որովհետև դրանք ամենքը ևս երթուեալ թշնամիք են յատկապէս Խէչանի նման անդէն ու անվնաս մարդկանց:

Հէնց-որ լուսինը երեսում է կապոյտ երկնակամարի վրայ, Խէչանն այլիս չի սպասում աղուէսի գալուն, այլ անմիջապէս դուրս է գալիս տանից, Սոտուած կանչում ու երկիւղը սրտից հանած քաջի նման մտնում անտառի խորերը և երկու ժամ շարունակ վազում: Նա տալիս-անցնում է կաղնուտը, եղինուտն ու հաճարկուտը և ընկնում մի թալայ—բաց տեղ:

Այդ բացաստանը լիքն էր զեղնածաղկով զարդարուն թփերով, որոնց մէջ մի ջահէլ ու սիրուն նապաստակ նատած՝ վրան-զլուխը լիզում-սղալում էր—շորերը հազնում-զարդարվում էր:

Խէչանը կանգ է առնում և դիմում նրան.

— Բարե, յարզելի տիկին:

— Աստծու բարին, ճամբորդ եղբայր:

Այդ ուր առաջ բարի, որ այդպէս շտապում ես քափ-ու-քրտնքում մտած:

— Թագաւորի մօտ եմ գնում:

— Թագաւորի մօտ....:

— Այս: Արգեօք չես կարող ինձ ցոյց տալ, թէ որ ճամբէն է տանում զէպի թագաւորի պալատը:

— Դէպի թագաւորի պալատը...: Ուղիղն

ասեմ, ճամբորդ եղբայր, ճիշտը չգիտեմ. ես  
իմ օրումը այն կողմերում չեմ եղած: Սա-  
կայն այդ մասին լսել եմ ողորմածիկ պա-  
պիցս, որ երիտասարդ ժամանակ շատ էր  
ճանապարհորդած: Այստեղ զնալու համար  
դու պէտք է բռնես այն հոկայ կաղնիների  
տակովն անցնող կածանը և քանի կարող  
ես՝ ոտերիդ ոյժ տաս մինչև արեածագ: Այդ-  
ժամանակ դիմացդ, դէպի ձախ, մի փոքր լիճ  
կ'երևայ: Ահա այդտեղ կանգ կ'առնես, որ-  
պէսզի նոր տեղեկութիւններ ստանաս ու-  
րիշներից:

— Անշափ շնորհակալ եմ, տիկին,—ա-  
սում է Խէշանը և կամենում է շարունակել  
իր ուղին:

— Միայն մի խօսք, պարոն,—դիմում է  
Խէշանին տեղեկատու նապաստակը:

— Ի՞նչ կը-կամենայիր, հարցնում է Խէ-  
շանը:

— Եթէ թագաւորին տեսնես, խնդրիր  
նրան որ ուտի և կամ բոլորովին հեռա-  
ցնի այս կողմերից այն որսորդներին, որոնք  
առանց պատճառի, լոկ քէֆներն ուզած ժա-  
մանակ մեզ զնդակահար են անում—սպա-  
նում և զանազան վնասներ պատճառում:

— Զուխտ աչքիս վրայ, կ'ասեմ անպատ-  
ճառ: Յտեսութիւն, ասում է Խէշանը և նրա  
ցոյց տուած կածանը բռնում:

Այդ կածանը—նեղիկ ուղին ձգվում էր  
մի բլրակի լանջով, որի վրայ մեր քաջարի  
ճամբորդը մեծ քանակութեամբ ծոթրին և  
այլ տեսակ-տեսակ հիւթալի, անուշաբոյր ու  
քաղցրահամ բոյսեր գտնելով՝ նրանցով յա-  
գեցնում է իր քաղցը: Խեղճը շատ էր սո-  
վել. ինչ տանից դուրս էր եկել, դեռ մի պա-  
տառ բան չէր զբել բերանը:

Խէշանը՝ որ կէտառկէտ հետեւել էր  
նապաստակի ասածներին, լոյսը բացուելիս  
իր դիմացը տեսնում է մի գեղին լիճ, որի  
ափերին հազարաւոր գորտեր նստուած՝  
սարքել էին իրանց նուազահանդէսը և կըր-  
կուալով երգում էին.

«Քիեեե ոռոին մեռել է,  
Քիեեե ոռոին մեռել է...»:

— Երեեե ըր, Երեեե ըր....:

«Մը կըկըկկէէէ օրը,

Մը կըկըկկէէէ օրը...»:

— Ուուղղոոո ըդ, ուուղղոոո ըդ....:

«Խըխխխաշ, Խըխխխաշ...

Մը կըկըկկէէէ օրը,

Մը կը կկէ է լ օրը,  
Մը կը կկ... ըղղը կկ...»

Բայց հէնց-որ Խէշանը հասնում է լճին,  
գորտերն իսկոյն ձայնները կտրում—լռում են  
և առաջ-կտրուկի տալով՝ բոլորն էլ թափ-  
վում են լիճն ու սկում—ջրի տակն անում։  
Սպա մի-երկու բոպէից յետոյ բարձրանալով  
ջրի երեսը, ուզում են լիքանալ, թէ այդ ով  
էր իրանց հանգստութիւնը խանգարողը։ Եւ  
միքանի բոպէ իրանց տորզած—դուրս  
պրծած ու ղեղնագոյն կլոր շրջանակով աշք-  
ները չուած—լայն բաց արած՝ սկսում են  
Խէշանին մտիկ անել։

Խէշանն անվնաս մարդ էր և բարի  
սրտի տէր, նրա դէմքը չէր կարող շարու-  
թիւն արտայայտել. ուստի մի պառաւ գորտ  
սիրտ է անում և ջրից դուրս գալիս։


Խէշանը նրան տեսնելուն պէս իսկոյն  
մօտենում է, քաղաքավարութեամբ զլուխ  
տալիս ու բարկում։

—Բարի լոյս, նանի։  
—Բարին արեիդ, որդի։  
—Նանի, հէնց քեզ արքայութիւն. խըն-  
դրեմ ասես՝ այս ճամբէքից ո՞րն է տանում  
դէպի թագաւորի պալատը։

—Դէպի թագաւորի պալատը, ասում ե՞ս։

—Այո։

—Ըըլ... սպասիր, սպասիր, որդի, որ  
միտս բերեմ. շատ պառաւելուց մտքամոլոր



—Նանի... այս ճամբէքից ո՞րն է տանում դէպի  
թագաւորի պալատը։

Եմ դարձել... Ըըլ... հա. ջուր խմելու հա-  
մար սարեկներ շատ են գալիս այստեղ։ Մի  
օր նրանցից մինը պատմում էր ընկերներին,  
ես էլ լսեցի։ Այնտեղ գնալու համար պէտք  
է տալ-անցկենալ եղենիների թաւուտը և  
դուրս գալ մի շատ մեծ ու ընդարձակ

մարգագետին։ Մրանից դէնը էլ բան չեմ  
լսած, որդի։

— Այդքանի համար էլ չնորհակալ եմ,  
նանի. ապրեն որտիքդ։

— Դու էլ ապրես, ջանի. բարով դու էլ  
իմ տարսին հասնես։

Խէշանը թէն յոզնածութիւնից համարեա  
ուժից ընկել էր, բայց առանց մի բոպէ ան-  
գամ հանգստանալու՝ շարունակում է ճանա-  
պարհը։ Որովհետև այն միտքը՝ թէ իր կինն  
ու զաւակները վտանգի մէջ են ու նրանց  
փրկութիւնն իրանից է կախուած, Խէշանին  
նոր ոյժ էր տալիս և եռանդն աւելացնում։  
Ուստի նա սկսում է այնպիսի ահազին ոս-  
տիւններով առաջ ընթանալ, որ շատ շուտով  
ընկնում է եղանիների միապաղադ թաւութը։

Խէշանի այդպէս շտապելուց ապշած պա-  
ռաւ գորտը ձայն է տալիս նրա ետևից։

«Պարոն նապաստակ... հէ-հէէէ, պա-  
րոն նապաստակ, պարոն նապաստակ...»  
Այ որդի, քեզ հնտ եմ։ Եթէ թագաւորին  
տեսնես, շմոռանաս այն էլ խնդրելու, որ նա  
մեզ ազատի ջրային օձերից, որոնք ողջ-ողջ  
կուլ են տալիս՝ ում ճանկում են մեզանից»։  
Բայց էլ որտեղ։ Խէշանն արդէն բաւա-

կան հեռացել էր. Նա քամու նման էր առաջ  
ընթանում, այլս անկարող էր կանգ առնել՝  
պառաւին պատասխանելու։

Այդպէս վազէվազ զնալով՝ Խէշանը շատ  
շուտ հասնում է պառաւ գորտի ասած մեծ  
ու ընդարձակ մարգագետնին, որից դէնն էլի  
սկսվում էր անեզր ու անծալր անտառի շա-  
րունակութիւնը։

Մարգագետնի ծայրին Խէշանը կանգ է  
առնում որ միքիշ շունչ քաշի—փոքր-ինչ  
հանգստանայ։

Խէշանի կանգ առած տեղից միքանի  
քայլ հեռու գտնուած թիկերից մէկի վրայ  
մի սոխակ նստած՝ գայլայլում էր—իր անուշ  
ձայնով կլկացնում—երգում էր ու լսողին  
յափշտակում, վեր քաշում—խելքը տանում։

Երբ սոխակը գաղարում է երգելուց, Խէ-  
շանը մօտ է գնում և ասում.

— Սոխակ, հրաշալի խօսնակ, խնդրեմ  
ինձ ցոյց տաս այն ճամբէն, որ ուղիղ դէպի  
թագաւորի պալատն է տանում։

— Նայիր դէնը,—ասում է սոխակը և  
գլուխը մեկնում.—տեսնում եռ անտառի  
այն թաւութը, որ երեսում է հեռում, ուղիղ  
մեր հանովէպ։

—Այս:

—Ահա հինգ այնտեղ է քնակվում թագաւորք:

«Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ. վերջապէս հասնում եմ նպատակիս», —ինքն իրան մէջ խօսում է Խէշանն ու ապա դիմում սոխակին.

—Անչափ չնորհակալ եմ քեզանից, բարի սոխակ:

—Միթէ թագաւորի մօտ ես գնում:

—Այս, բան պէտք է խնդրեմ:

—Եթէ այդպէս է, ապա ուրեմն բարի եղիր, բարեկամ, և մի մոռանար նաև խնդրելու, որ նա այս անտառից բոլորովին վոնդի անպիտան խայտահաւերին ու չար կատուաբուերին, որոնք իրանց համար բան ու գործ են շինել այստեղի խաղաղ ու անվնաս և միևնոյն ժամանակ շատ օգտակար ընակիչներիս ամեն տեսակ նեղութիւններ տալ, մեր հանգիստը վրդովել, կեանքներս դառնացնել. մարդ չի իմանում ինչո՞ւ կամ մեր ո՞ր յանցանքի համար: Բայց որ վատն է և վրդովեցուցիչը՝ այդ ամենն անում են, կարծես առանց խղճի խոյթ զգալու, նոյնիսկ պարծենալով, որպէս-թէ՝ մեծ բանի վրայ են:

—Վստահ եղիր վրաս, չեմ մոռանալ յանձնարութիւնդ, անպատճառ կ'ասեմ: Յտեսութիւն, երգիչների թագուհի, —ասում է Խէշանն ու բոնում իր ուղին:

—Բարի ճանապարհ, յաջողութիւն և ողջմամբ դարձ, քաջ բարեկամ, —ձայնում է Խէշանի ետևից սոխակը:





¶

## ԹԱԳԱՐԱԾԻ ՊԱԼԱՏԸ



Այս էշանը զնում էր ու մաքի մէջ ծանրութեթև անում—ուշիուշով զըննում իր դիմացը տարածուող անտառը, որ լիքն էր անթիւ ու անհամար հարիւրամեայ հաստարմատ ու բազմաճիւղ կաղնի, հաճարի, թեղօշի, բարձրաբուն կէշի, նշտարենի ու ցարասի և ուրիշ շատ ու շատ հսկայ ծառերով:

Այդ բոլոր մեծ-մեծ, կատարներն ամպերին հասցրած վիթխարի ծառերը, որոնց երբէք կացին չէր դիպել, ճիւղերով ու ոստերով այնպէս էին փաթաթուել ու հիւսուել իրար, որ ամեննեին չէին երևում նրանց բները, այլ միմիայն ցարասիների սպիտակու-

թիւնն էր աչքի ընկնում անտառի խորութեան մէջ:


Գիտինը ամբողջովին ծածկուած էր ծառերից թափուած սև ու սուր-սուր փշերով. բայց մեր քաջ ու անվախ բարեկամ Խէշանը էլ շատ երկար-բարակ չի մտածում անելիքի մասին, այլ առանց ուշք զարձնելու փշերի-ու-մշերի վրայ, անմիջապէս մտնում է անտառի ներսը և մի քառորդ ժամ վազեցաղ առաջ գնում անընդհատ:

Եւ նա գուցէ այդպէս դեռ երկար գնար, եթէ մէկէլ յանկարծ մի զարհուրելի, որոտալու նման ահեղ ձայն տեղնուտեղը չմեխէր նրան:

Խեղճ նապաստակը երկիւղից ամբողջովին զողղողալով՝ կուչ է զալիս մեծ ցարասենու տակ գտնուած խլուրդի հողակոյտի մէջ:

Այդ տեղից մի քայլ գէնը, ուղիղ Խէշանի աչքի առաջ, մամուռի մէջ մի սիրուն, մետաքսամազ ի՞նչ է եղել քեզ, և ջրատար... մկնիկ էր նստած:

— Ի՞նչ է եղել քեզ, ա ջրատար. ինչի



ես այդպէս կողում, հարցնում է մկնիկը կարեկցութեամբ:

— Ի՞նչի եմ զողում...: Միթէ չլսեցիր:

— Ի՞նչ...: Ախ, այս... հասկացայ: Որոտման ձայնի համար ես ասում:

— Այս: Այդ ի՞նչ սարսափելի բան էր:

— Այդ թագաւորի ձայնն էր:

— Թագաւորի ձայնը...

— Այս. Նոր արթնանալիս նա իր պալատականներին միշտ այդպիսի մոնչիւնով է իմաց տալիս: Նրա սովորութիւնն այդպէս է:

— Ախ, ցոյց տուր ինձ, յատուկ խնդրում եմ, թագաւորին իրան. ես պէտք է զնամ նրա հետ խօսեմ մեր ցաւերի մասին:

— Աչքիս վրայ,—ասում է մկնիկը,—այդ մի դժուար բան չէ: Տեսնո՞ւմ ես այն բաղեղը:


— Այս:

— Դէկ, մէկ նայիր նրա զոյգ տերևների արանքով:

Ուղիղ նրանց գէմուդէմը, մի խոր քարանձաւի առաջ վեհապանձօրէն բազմած էր մի վիթխարի առիւծ—կենդանիների թագաւորը:

Խէչանը հէնց-որ չի տեսնում՝ թագաւորի լայն երեսը, մարդու վրայ դարզանդ

բերող նրա խոշոր ու շողողուն աշքերը, նրա հաստ վիզը ծածկող թանձրամազ բաշը,




Թագաւորը:

նրա երկար ու սուր-սուր ճիրաններով ահազին թանթուլները, — մինչև ականջների ծայրը սարսուսմ է: Այդ ահեղ տեսարանի առաջ խեղճի թուքը-մուքը ցամաքում, լեզուն կապ է ընկնում և այնպէս է շշմում-շփոթվում, որ մնում է սառած, ապշած և էլ չի իմանում ի՞նչ անելիքը:

Թագաւորի առաջ շուրջանակի կանգնո-

տած էին պալատի մեծամեծները. առաջին



Թագաւորի պալատը:

կարգում՝ փիղը, վագը, յովազը, ինձը. յե-

տոյ զալիս էին՝ արջը, ընձառիւծը, զայլը,  
վարազը, ապա չնազային ու բորենին—մար-  
դազայլը:

Վեհապետի մի նշանով բոլոր պալատա-  
կանները մէկ-մէկ, աւագութեան կարգով,  
մօտենում են և պատկառանքով ողջունում  
նրան:





Այս ինձ... և Ես,—ինքն իրան  
մտմտում է Խէշանը.—և Ես պէտք է  
զնամ ու նրա հետ երես-առ-երես խօսեմ,  
համար...: Թահուր...

—Հը՛, ի՞նչ է, բարեկամ. չէ՞-որ դու  
կամենում էիր զնալ թագաւորի հետ խօսել,  
—հարցնում է մկնիկը և ապա աւելացնում  
յանդիմանօրէն.

—Մարդ իմանայ, թէ ի՞նչ մի առանձին  
կարիք կայ այդ դժուարին ու վտանգաւոր  
քայլն անելու:

Այն-ժամանակ Խէշանն ստիպուած՝ մի-  
առ-մի պատմում է իրանց զլսին եկած դըժ-  
րաղութիւնը:

—Այն, ա խեղճ,—վրայ է բերում մկնի-  
կը իր բարակ, ծրւծլւան ձախով, հէնց-որ  
Խէշանը վերջացնում է խօսքը,—ինչպէս տես-  
նում եմ, ձեր դրութիւնը շատ էլ նախանձելի  
չէ. դուք ուղղակի դժուար կացութեան մէջ  
էք գտնվում: Սակայն ի՞նչ ես կամենում որ  
թագաւորն անէր ձեզ համար:

—Ի՞նչպէս-թէ՝ ի՞նչ եմ կամենում որ  
անէր, քանի-որ նա թագաւոր է:

—Այն, անկասկած, թագաւոր է, այսինքն  
իր քէֆն ուզած ժամանակ կարող է ուտել՝  
ում ուզենայ, ով իրան զիւր գայ, և այդ բա-  
նին ոչ-ոք չպէտք է համարձակուի ընդդի-  
մանալ, էլ այնուհետև ոչ մի բան նրա փոյ-  
թը չէ: Սղուէսը թէկուզ փոքրիկներիդ լափի  
էլ, այնուամենայնիւ այդ բանը՝ ամենաշնչին  
չափով իսկ արգելք չի լինիլ մեր մեծափառ  
արքային, որ նա իր աղա-քէֆը անհոգ վայելի:

—Սակայն ես...

—Դեռ սպասիր՝ խօսքս վերջացնեմ: Մի  
րոպէ ենթաղրենը, թէ նա գուցէ բարեհաճի  
քեզ լսել և պաշտպանել. սակայն դու ի՞նչ-  
պէս պէտք է մօտենաս նրան, որ ճշմար-  
տութիւնը յայտնես և ուզածդ խնդրես: Խել-  
քի մօտիկ բան է այդ: Հէնց առաջին քայ-

լափոխիդ մի այլ աղուէս կամ գայլը կ'ուտի  
քեզ. եթէ դրանցից մի կերպ փախուստ տաս,  
արջից չես սլրծնիլ, նրա ճանկը կ'ընկնես:  
Բայց եթէ որևէ հնարքով կամ մի բաղդա-  
ւոր դիպուածով արջի ձեռքից էլ գլուխդ  
ազատես, հաստատ է որ միւս պալատական-  
ներից մինն-ու-մինի ճիրանների մէջ պէտք  
է արիւնաքամ լինելով շունչդ փշես: Ուրեմն  
ի՞նչ խելք է քո կողմից թագաւորին տես-  
նել ուզելզ:

«Վայ իմ սիրուն բալէք», — մորմորուած  
սրտով բացականչում է դժբաղդ Խէշանը և  
յետոյ ասում.

— Սակայն ես փոքրիկներիս ազատելու  
յուսով եմ եկել, թէկուզ մեռնելու էլ լինեմ,  
պէտք է զնամ:

— Ի՞նչ երեխան ես եղել, մեր տղայ, —  
նկատում է մկնիկը մտերմաբար:

— Թո՞ղ այդպէս լինի, բայց-և-այնպէս  
պէտք է զնամ, — ալնդում է Խէշանը:

— Ըատ լաւ, — ասում է մկնիկը. — Եթէ  
կամակորուես ու զնաս և իզուր տեղը գլուխդ  
մահին տաս, միթէ դրանով կը-լաւանայ  
փոքրիկներիդ զրութիւնը և թէ առհասա-  
րակ ձեր ամենքիդ կացութիւնը:

— Ո՞չ ի-հարկէ:

— Ուրեմն:

— Սակայն ի՞նչ պէտք է անեմ, ի՞նչ, դու  
այն ասա... ախ, ձայնում է հէք Խէշանը և  
գլխին-ու-գլխին խփում թաթլիկներովը:

— Նախ՝ այն կ'անես որ այդպէս չես  
յուսահատուիլ: Իր յարգն ու պատիւն իմացող  
խելօք մարդը ոչ մի ժամանակ չպէտք է  
այդպէս յուսահատուի. որովհետև այդպիսի  
յուսահատութիւնը թէ վնաս է և թէ մահա-  
անդ շատ ամօթ բան, որ յատուկ է միմիայն  
փոքրանոզի մարդկանց...: Այն, յուսահատու-  
թիւնը երբէք ոչ-ոքի օգուտ չի բերել, այլ  
միայն վնաս: Երկրորդ՝ առանց ուշանալու  
վերադարձիր տուն և փոխանակ վիզներդ  
ծուած սրան-նրան դիմելով իզուր ժամանակ  
կորցնելու, փոխանակ ձեր անխելք ու ան-  
հեռատես հարևաններին աղաչելու՝ նրանց  
օգնութիւնը ձեռք բերելու յուսով, և կամ  
թագաւորից սպասելու ձեր գրութեան բա-  
րելաւումն, աւելի լաւ կ'անէք, եթէ ձեր ոյ-  
ժերի վրայ վստահացած՝ ինքներդ աշխատէք  
ձեզ ազատել զիմներիդ եկած դժբաղդու-  
թիւնից: Ապահով ու հանգիստ ապրելու ա-  
մենահաստատուն միջոցն այդ է, և ոչ-միայն

հաստատուն, այլև ամենալաւն ու ամենախելօքը: Եթէ դուք իմ այս խորհրդիս հետեւք, վստահ եմ որ չէք զղջալ: Որովհետև սեպհական ջանքով ու ազնիւ աշխատանքով ձեռք բերած ազատ և ապահով կեանքի նման քաղցր, թանկագին, նոյնիսկ անգին բան չկայ ողջ աշխարհիս երեսին, լաւ գիտենաս:

—Հաւատա, որ իրաւոնք ունես,—ասում է Խէշանը:—Ես նոր եմ գլխի ընկնում —հասկանում որ շարերով լքցուած մեր սիրուն աշխարհում ազատ ու ապահով ապրելու միակ ճանապարհն այդ է: Մարդ պէտք է ինքն իր վրայ յոյս գնի և ոչ թէ ուրիշների յուսով մնալով՝ անորոշ դրութեան մէջ գտնուի, որ ամենավատ բանն է խելքը գըլխին մարդու համար: Ողորմի քո ծնողաց, բարեկամ. այսուհետև ամբողջ կեանքիս ընթացքում ես քո խորհրդին կը-հետեւմ և ուրիշներին էլ անկեղծօրէն նոյն խորհուրդը կը-տամ: Ուրեմն իզուր չէ ասուած, թէ «ինքդ բեզ օգնիր, որ Աստուած էլ օգնի քեզ»: —Քանք Աստուծոյ, որ այդպէս շուտ խելքի եկար. այդ ամենալաւ նշան է, —ասում է մկնիկը:—Ուրեմն էլ ժամանակ մի


կորցնիր. իսկոյն վերադարձիր տուն և ձերոնց հետ՝ միացած ուժով ու եռանդով զնործի կացէք: Ես հաւատացած եմ, նոյնիսկ համոզուած՝ որ դուք անպատճառ կը-հասնէք ձեր նպատակին, եթէ շարունակ և առանց յուսահատուելու քաջի պէս աշխատէք և՝ որ ամենազլիսաւորն է, հաւատացած լինէք, թէ սկէտք է յաջողուի ձեր արդար զործը—թէ դուք յաղթելու էք անպատճառ: Այդպիսի յոյսն ու հաւատը հրաշքներ կարող են գործել, ուր մնաց թէ մի անպիտան աղուէսին յաղթելլ: Դէք, Տէքն ընդ քեզ. բարի ճանապարհ:

Խէշանն այլսս երկրորդ անգամ կրկնել չի տալիս, այլ սրտանց չնորհակալութիւն է յայտնում մկնիկին՝ նրա լաւ ու օգտակար խորհրդի համար, մնաս-բարով ասում և իսկոյն ճանապարհ ընկնում դէպի տուն:

Բոպէ առաջ տեղ հասնելու յուսով՝ Խէշանն սկսում է այնպէս սաստկութեամբ վագել, այնպիսի ոստիւններով առաջ ընթանալ, որ հէնց զիտենաս թէ ետեից շուն էր ընկել:

Ճանապարհին Խէշանը հետզհետէ հանդիպելով սոխակին, պառաւ գորտին ու ջա-

ՀԵԼ նապաստակին, որոնք անհամբեր նրան  
էին սպասում, մի ըովէով կանգ էր առ-  
նում, համառօտ կերպով յետ պատմում տե-



Խէչանն շտապում է դէպի տուն.


սածն ու լսածը և խօսքն այսպէս վերջա-  
ցնում.

—Ուրիմն իզուր ժամանակ միք կորցնիլ  
ուրիշներից օգնութիւն ստանալու յուսով,  
այլ ձեր սեպհական ոյժերի վրայ վստահացած՝  
ինքններդ աշխատեցէք ձեզ ազատել զլխներիդ  
եկած և թէ դալիք դժբաղդութիւնից: Ո-

րովհետև աշխարհիս երեսին հանգիստ, ազատ  
ու ապահով ապրելու միակ հաստատուն մի-  
ջոցն այդ է. ուրիշը չկայ: Ինքններդ ձեզ օդ-  
նեցէք որ Աստուած էլ օգնի ձեզ:

Ասում էր Խէչանը և հետինհետ—անմի-  
ջապէս էլի իր վազքը շարունակում:





Եղած նապաստակը երկու օր ու  
մի գիշեր զլխապատառ վագելուց յե-  
տոյ՝ քաղցից, յոզնածութիւնից ու մտա-  
տանջութիւնից հալումաշ եղած, տեղ է հաս-  
նում և կաղնիների թաւուտից սկսուող շաւ-  
դով գնում-մտնում իրանց բոյնը:

Խէչանի ուրախութիւնն անչափ է լի-  
նում, երբ իր սիրեցեալ Խորիշանին ու  
երեխաներին ողջ և առողջ է գտնում:

Իսկ թէ տանըցիք որքան են ուրախա-  
նում, երբ տեսնում են տան-զլխաւորի—սի-  
րելի հայրիկի ողջամբ ներս մտնելը, այդ  
գրելով արտայայտել դժուար է. այդպէս  
բանը մարդ պէտք է ինքն իր սեպհական  
աշքով տեսնի, որ կարողանայ պարզ գա-

ղափար կազմել այդպիսի հոգեկան տրամա-  
դրութեան մասին:

Մէկ խօսքով՝ ամենքն էլ երջանիկ են  
զգում իրանց և սրտանց փառք տալիս  
Աստծուն, որ արժանացրեց կրկին իրար  
տեսութեան:

Միայն-թէ այժմ ժամանակը չէր որ  
նրանք ազատօրէն, հանգիստ հոգով նուիր-  
ուէին իրանց ընտանեկան այդ քաղցր ու-  
րախութեան: Դեռ անհրաժեշտ էր վերահաս  
դժբաղդութիւնը հեռացնել իրանցից, այսինքն  
նախ իրանց գոյութեանն սպառնացող վը-  
տանգից ազատուել—իրանց բոլորովին ա-  
պահովել և ապա-թէ մտածել բաւականու-  
թիւնների մասին:

Երբ ուրախութեան առաջին զօրեղ տը-  
պաւորութիւնն անցնում է, Խորիշանը գի-  
մում է ամուսնուն.

—Դէ, ասա, տեսնենք, Խէչան-ջան. Ի՞նչ  
դրութեան մէջ ենք այժմ:

—Ճիշտ այն՝ սիրելիս, ինչ գրութեան  
մէջ որ էինք իմ գնացած օրը:

—Ի՞նչ ես ասում, Խէչան, այդ անկա-  
րելի է:

—Աւաղ, ուղիղն եմ ասում, Խորիշան-

ջան,—պատասխանում է Խէշանը և մի-առմի պատմում իր ճամբորդութիւնը մանրամասնօրէն, այսինքն՝ ումն ու ում հանդիպելը, ինչ ու ինչ տեսնելը և վերջն էլ մկնիկի հետ ունեցած բոլոր խօսակցութիւնն ու նրա տուած խորհուրդը:

—ԷէԷ... ուրեմն քարը վերցնենք, Խէշան-ջան, ու քարի վրայ դնենք. ուզում եմ ասել՝ լաւն այն է որ այդ մասին, այսինքն ուրիշներից օգնութիւն ստանալու վրայ՝ էլ ոչ մտածենք և ոչ խօսենք այսուհետեւ,—նկատում է խելօք կինը՝ ամուսնու խօսքը մինչև վերջն ուշադրութեամբ լսելոց յետոյ և ապա շարունակում.

—Դու միայն մի խորհուրդ ես բերել հետդ, սիրելիս, որ՝ ուղիղն ասեմ, շատ լաւ խորհուրդ է թվում ինձ: Ուրեմն առանց ժամանակ կորցնելու աշխատենք օգտուել դրանից, որքան կարելի է շուտ, որպէսզի միջոց շատնք մեր նենդամիտ թշնամուն՝ ոչ շատ յառաջանալու և ոչ էլ իր շար նպատակին հասնելու:

—Այդ ասելլ շատ հեշտ է, բայց-թէ ինչպէս պէտք է անել, ահա այդ է դժուարը,—նկատում է Խէշանը:

—Լսիր,—ասում է կինը.—ինչպէս տեսնում ես, բացակայութեանդ միջոցին ժամանակն իզուր չեմ կորցրել, այլ ամբողջ օրեր մեր բնի ներսը փորելով՝ այնքան եմ խորացրել, որ աղուէսը եթէ իր բոլոր խորամանկութիւնն ու անպիտանութիւնը մէջտեղ հանի, էլի չի կարողանալ շուտով հասնել իր շար նպատակին: Երէկ...

—Բայց չՔ-որ այն անիծածը...

—Դեռ սպասիր՝ բոլորն ասեմ: Երէկ մի քիշ ուտելիք ձեռք բերելու համար երբ տանից գուրս եկայ, ուշադրութեամբ աշքի անցրի այն շառաւիզը, որի վրայ դեռ ոտք չի դրել գրողի-տանելուն. բացի զրանից այն էլ նկատեցի որ մեր բնի վրայի ապառաժը շատ է հակուած—թեքուած մուտքի վրայ:

—Լաւ, ինչ հասկացանք զրանից:

—Այն, սիրելիս, որ եթէ ապառաժի տակը միքիշ փորուի, այդ բաւական կը-լինի որ նա զլորուի: Եւ եթէ այդ յաջողուի, այն ժամանակ ի-հարկէ մուտքն էլ կը-փակուի բոլորովին:

—Այն, և մեզ էլ իր տակովն անելով՝ կը-ջախջախի փառաւորապէս:

—Ամենելին:

—Ասածդ լաւ չեմ հասկանում:

—Եւ սակայն շատ պարզ է: Աղուէսը միմիայն գիշերներն է գալիս, հետևապէս ամբողջ օրը մենք ապահով կերպով կարող ենք փորել ու դուրս տալ ապառաժի տակի հողը: Երբ քիչ մնայ ապառաժի խորտակուելուն, այսինքն այնքան միայն հաստատուն լինի, որ կարողանանք թեթևաքայլ անցնել նրա վրայով անվտանգ, անմիջապէս ներս կը-մտնենք:

—Այդ էլ լաւ. սակայն յետոյ ի՞նչ է լինելու, դու այն ասա:

—Յետոյ ի՞նչ է լինելու. այն կը-լինի որ երբ աղուէսը գայ ու սկսի իր գործը, մենք էլ գաղտնի կերպով դուրս կը-գանք միւս կողմից և մեր բոլոր ուժով այնպէս սաստկութեամբ կ'ընկնենք ապառաժի վրայ, որ չդիմանալով մեր ուժզին թափին, տեղահան կը-լինի, կը-գլորուի ու կը-ծածկի մուտքը, իսկ նենգամիտ պարոնը կ'ընկնի թակարդի մէջ...: Հիմա հասկացար:

—Վայ, խելքիդ մատաղ, սիրուն-ջան:

—Դէ, ի՞նչ ունիս ասելու:

—Էլ ի՞նչ պէտք է լինի ասելու, որ ա-

սեմ. դու քաշովզ մին ոսկի ես, զնուտ ոսկի, կեանքդ սիրեմ ես:

—Ասել է զ՞հ ես ինձանից,—խորամանկ ու սիրուն ժպիտով հարցնում է խորիշանը ամուսնուն:

—Օ՛, սիրեմ զքեղ, ի-հարկէ-որ զոհ եմ:

—Ուրեմն հէնց վաղուանից սկսենք մեր գործը, Խէշան-ջան: Մեղք են երեխէքը. քանի օր է երեսներին ծիծաղ չի գալիս: Այն անպիտանի ահից խեղճ երեխէքս մնացել են տանը փակուած, մաքուր օղից դրկուած:

—Այն, հնգիս, լուսանալուն պէս, երբ այն անիծածը հեռացած կը-լինի, մենք էլ անմիջապէս գործի կը-կենանք—կը-սկսենք մեր ձեռնարկութիւնը:





Ե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԵՄԻՆԻ



**Մ**իւս օրը լոյսը բացուելուն պէս Խէշանն ու Խորիշանը ժիր-ժիր գործի են կպչում և ողջ օրը այնպէս եռանդով աշխատում, որ մութն ընկնելիս, երբ պաշարումն պէտք է սկսուէր, ապառաժն արդին սկսել էր շարժուել ստորոտից և դեռ միքիչ էլ խախտուել—տեղահան էր եղել:

Սղուէսը ոչինչ չկասկածելով՝ զալուն պէս մտնում է շաւիղի ներսն ու սկսում իր շար գործը:

Խէշանն ու Խորիշանը հէնց այդ բանին էին սպասում անհամբեր: Նրանք խկոյն զուրս են զալիս բնից և երկուսով միասին հօպ անում ու ցատկում ապառաժի վրայ:

Ապա հաւաքելով իրանց բոլոր ոյժը՝ վրայու-վրայ երեք-չորս փառաւոր ոստիւններ են գործում այնպիսի ուժգին թափով, որ ահազին քարը էլ աւելի տեղահան լինելով՝ սկսում է հակուել—ծոռւել դէպի բնի մուտքը:

Այդ բանից մի թեթև շուկ է հասնում աղուէսի ականջին և նա շտապում է դուրս դալ որ տեսնի թէ այդ ինչ ձայն էր:

Աղուէսը զլուխը դուրս է հանում թէ չէ, խկոյն հասկանում է ամեն բան և հէնց այն է վերահաս վտանգից ազատուելու համար ուղում է կծիկը դնել—փախչել, որ մէկէլ յանկարծ ապառաժը շառաչմամբ զլորվում է ու տակովն անում նրա պոչը:


Սաստիկ ցաւից նա մի զառնագին կաղկանձին է արձակում և լալագին ձայնով ասում.

«Վայ... պ՛շս... իմ սլ՛րուն... իմ անման պ՛շս...»:

—Ուխայ, ուխայ,—վերեխց ձայնում է Խէշանը:

—Կերա՞ր, անիծած,—միւս կողմից վրայ է ըերում Խորիշանը.—չար, զզուելի՛ յափշտակիչ: Դու և քեզ նմանները սովորութիւն էք զարձրել ձեզ համար՝ ուրիշների

սեպհականութիւնները յափշտակել օրը-ցերեկով և այդպէս անազնիւ ու տմարդի միջոցներով ձեր անպիտան գլուխը պահել։ Եւ



Վայ... պոչու...

որպէս-թէ մեծ բան էր անում, դեռ պարծենում էլ էր, փոխանակ ամօթից գետինն անցնելու...։ Թիւհ... աներես...։

— Ասած է՝ տատն ամեն օր գաթայ չի ուտիլ։ Այս անզամ քեզ համար արելը վատ տեղը մթնեց, — նկատում է Խէշանը. — դու՝ որպէս վատ ու անխիղճ մարդ, ստացար պատիժ, որ՝ ճիշտն ասած, չատ չնշին է

կատարածդ չարութիւնների հետ համեմատած...։ Մէկ ասա, Է՛, նենզամիտ անպիտան. լաւ հնար էր մեր արածը, չՔ։ Դէ, հիմա զնա՞յ յիմար գլուխդ գովելու համար որտեղ քոնն ասես, այնտեղ էլ մերն ասել չմոռանաս։

— Դէ, հիմա եթէ կարող ես, ա ու-զրողի տանելու, աշխատիր պոչդ անվնաս ազատել, ապա-թէ-ոչ եթէ վիրաւորուի, այդ ուղղակի բարոյական մահ կը-լինի քեզ համար. թէ-պէտ դու... և բարոյականութիւն՝ ամենեւին իրար չէք ընկնում, — իր կողմից նկատում է Խորիշանը, որ Խէշանից շատ աւելի էր գառնացած նենզամիտ անպիտանի դէմ։

— Դէ, փորձիր-ձգիր, — ասում է Խէշանը։  
— Ով իմանայ, կարելի է թէ յաջողուի ու ազատուես. չՔ-որ դու շան բաղդ ունես։

Սակայն արդար գատաստան անող ապառաժը շատ ծանր է լինում. աղուէսը որքան էլ ձգձգում է, բան չի գառնում — չի կարողանում ազատել իր բրդոտ պոչը նրա տակից։

Անպիտանը լաւ գիտէր որ իրան չեն սիրում և ոչ-միայն չեն սիրում, այլև ուղղակի ատում ու զզվում են իրանից՝ իր չար ու անպիտան, իր տմարդի ու խարդախ ա-

ըարքների, իր խաքեբայութիւնների համար։  
Աւտի և համոզուած՝ որ ոչ-ոք չի օգնելու  
իրան, գուցէ նոյնիսկ՝ իբրև արդար վրէժ,  
քարկոծելով իր դրութիւնը աւելի ևս վա-  
տացնեն, ճարը կտրուած՝ ժողովում է բո-  
լոր ոյժը և նորից սկսում ձգել պոչը որ  
կարողանայ դուրս քաշել։

Ճիշտ է թէպէտ դուրս է քաշում ու  
անմիջապէս ծլկում—փախչում, սակայն ինչ  
կ'անես որ իր սիրուն, իր աննման պոչի մեծ  
մասն էլ թողնում է ապառաժի տակին ու  
այնպէս պուկ-անում—գնում առանց ետ  
նայելու։

—Այ, Աստուածանից խնդրել եմ՝ գնալզ  
լինի, գալզ ոչ, —աղուէսի ետևից ձայնում է  
Խորիշանը։

—Ամէ՞ն, —վրայ է բերում Խէշանը։

Ինչպէս որ ազնիւ մարդու համար մաքուր  
սլատիւն ու բարի անունը ամենաթանգ բանն  
է աշխարհիս երեսին, այնպէս էլ մի կարգին  
աղուէսի համար ամենաթանկագին բանը իր  
պոչն է։

Եւ որովհետեւ ազնիւ մարդու համար

չկայ աւելի մեծ ամօթ, քան մաքուր պատ-  
ուից ու բարի անունից զրկուելը, այնպէս  
էլ կարգին աղուէսի համար չկայ աւելի մեծ  
խայտառակութիւն, քան պոչատ կամ վիրա-  
ւորուած լինելը։

Ահա այդ-իսկ պատճառով նա այլևս  
անկարող լինելով տանել այդպիսի մեծ  
անպատութիւն, ամօթի կրակից ստիպ-  
ուած վեր է կենում, թէպէտ ակամայ, և  
զլուխն առնում-կորչում։ Նա հեռանում է  
անտառի թէ այն մասից, որտեղ Խէշաննք  
էին բնակվում և թէ առհասարակ այն կող-  
մերից, ուր ամենքին էլ արդէն յայտնի էր  
դարձել, թէ ինչ պատճառով է նենզամիտը  
իր ունեցած վատ անունը աւելի ևս կոտ-  
ըել—վիրաւորուելով՝ իր բրդոտ, սիրուն  
պոչից զրկուել և կարգին, օրինաւոր աղ-  
ուէսների շարքից դուրս ընկել ու այդպիսով  
շատերի տնազատեղը դարձել։

Խէշանն ու Խորիշանը անչափ ուրախա-  
նում են և սրտանց փառք տալիս Աստծուն  
որ խսպառ աղատուեցին իրանց գոյութեանն  
սպառնացող այնպիսի վնասակար ու տմար-  
դի, այնպիսի զդուելի ու երդուեալ թշնա-  
մուց, որին նոյնիսկ, ինչպէս զիտենք, հայ-

ըենի երկրից անզամ հեռացրել էին իր վատ  
ու անհաշտ, իր անպիտան ու անտանելի  
բնաւորութեան համար:

Վտանգից ազատուած սեպհական ջանք  
ու աշխատանքով, ամուսինները հանդիսա  
շունչ են քաշում: Նրանք նորից երջանիկ են  
զգում իրանց որ կարողանալու են էլի նախ-  
կին խաղաղ կեանքն ու պատուաբեր զբաղ-  
մունքները շարունակել, այն է՝ ամբողջովին  
նուիրուել իրանց աշխատանքին և իրանց  
ապագայ յոյս ու ապաւէն, ծերութեան նեցուկ  
զաւակների կրթութեան ու դաստիարակու-  
թեան գործին:

Ծնողների փափազն այն էր, որ իրանց  
որդիքն ազնիւ և ամեն կողմով օգտակար  
անդամներ դառնան իրանց հասարակութեան  
համար:

Սակայն կեանքի զառը դասերից խրատ-  
ուած ու փորձուած ծնողները լաւ իմանա-  
լով որ ծաղիկների թաղուհի վարդն էլ  
առանց փշերի չէ և ուրեմն իրանց ձեռք բե-  
րած խաղաղ կեանքը կրկին կարող է վըր-  
դովուել որևէ անպիտանի քմահաճութեամբ,  
ամեն կերպ աշխատում են իրանց զաւակ-  
ներին այնպէս մեծացնել ու դաստիարակել,

որ դժբաղդութիւն պատահած դէպքումնրանք  
ոչ յուսահատուեն ու ձեռքները ծալած նստեն  
և ոչ էլ ուրիշների օգնութեան վրայ յոյս  
զնեն ու սպասեն. ոչ, չանեն այդպէս:

Այլ վստահացած իրանց սեպհական ոյ-  
ժերի վրայ, յուսով ու հաւատով լի, առանց  
ժամանակ կորցնելու, եռանզով գործի կե-  
նան, որպէսզի աւելի հեշտ լինի բոպէ առաջ  
իրանցից հեռացնել եկած պատուհասը: Ո-  
րովհետեւ միայն այդպէս անելով կարելի կր-  
լինի ապագայ դժբաղդութիւնների առաջը  
և առնել:

— Այն, սիրելիք. — յաճախ կրկնում էին  
ծնողները, — միմիայն այդ կերպ հնարաւոր  
է ապահով ու հանդիսա ապրել աշխարհիս  
երեսին, որ լի է այնպիսի սե-սիրտ ան-  
հատներով, որոնք իրանց կոպիտ ոյժը գործ  
են զնում իրանց նման և շատ բանով էլ  
իրանցից օգտակար, իրանցից խելօք ու ապ-  
նիւ մարդկանց դէմ և յատկապէս խաղաղ  
ու անալաշտպան մարդկանց դէմ, այն էլ մի  
ամօթաբեր պարծանքով ու զգուելի ինք-  
նարաւականութեամբ:

Մեր բարեկամ Խէչանն ու իր կին Խորի-  
շանլը հրձվում էին. նրանց ծնողական սիրող

սիրտը թրթում էր ուրախութիւնից, երբ  
տեսնում էին իրանց աշքի լոյս զաւակների—  
իրանց օջաղի ճրագն ապագայում վառ պա-  
հողների աշխատասիրութիւնն ու արած յա-  
ռաջադիմութիւնը:

Նրանք օր-օրի վրայ համոզվում էին՝ որ  
իրանց աշխատանքն իզուր չի անցնելու,  
որ իրանց յօյսերն ու ակնկալութիւնները  
ժամանակով պսակուելու են լի-ու-լի:

Ուստի արժէ՞ր տեսնել լուսնկայ զլզլան  
—պարզեկայ սիրուն զիշերներին այդ ազատ  
ընտանիքի զբուանքները ծառատաններում  
ու անմեղ ուրախութիւնները ծաղկապարզ  
ցաքուտներում։ Իսկ ցերեկները՝ բնի մէջ և  
թէ բնի առաջ—բակում, ինչպէս ծաղկոցում,  
նրանց նպատակայարմար պարապմունքները,  
նրանց խելացի գործերն ու խօսակցութիւն-  
ները, որոնք տեսնողների ու լողների բա-  
րի նախանձն էին շարժում։



1000



ՀՀ Ազգային գրադարան

NL0390275

1868